

1680

891.715

4-49

15. 1931

ՔՆԱՐԻԿԸ
ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ



891.71-93

Կ-49

ԽՅՀԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԳ. ԿՆԵՏՐՈՆԱԿ. ՀՐԱՏԱՐԱԿԶ. ՄՈՍԿՎԱ, 1931

891.715
4-49

ՎԵ. ՎԵՆԵՅՍԿԱՅԱ

Ք Ն Ա Ր Ի Կ Ը Հ Ե Ղ Ա Փ Ո Ւ Ա Կ Ա Ն

1954 $\frac{1007}{32538}$

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՐԴՆ. ԿԵՆՏՐՈՆ. ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ

1931



34465 ա

Փարզմ. Ա. Մ. Հ.

ՔՆԱՐԻԿԸ ՀԵՂԱՓՈՒԱԿԱՆ

Հեղափոխությունից առաջ եր, ցարի ժամանակ: Յես տապերկու տարեկան եյի, բայց այնքան փոքր ու նիհար, վոր բոլորն ել կարծում եյին թե իննը տարեկան եմ:

Մեր բնակարանը բաղկացած եր յերկու սենյակից և խոհանոցից: Հայրս գրաշար եր, իսկ մայրս կար եր անում ուրիշների համար:

Ինչպես հիմա, հիշում եմ այն յերեկոն. յես մի ջիշ մըսել եյի և պառկել անկողնում: Հայրիկս տանը չեք, իսկ մայրիկս սեղանի մոտ նստած կար եր անում, նա շտապ աշխատանք ուներ մյուս օրվա համար:

Մեքենայի չիկչիկոցի տակ յես համարյա ննչեցի. վոչ քնած եմ վոչ արթուն. լսում եմ թե ինչպես հայրիկս ներս մտավ—ուրախ ու զվարթ: Մայրիկս նրան զգուշացրեց.

— Սուս-ս... Բնարիկը քնած ե:

Հայրիկս զնոտեցավ ինձ, նայեց, հետո նստեց մայրիկին մոտ և ցածր ձայնով խոսում ե.

— Լավ ե վոր Բնարիկը քնած ե: Ճարեցի...

20986-60

— Ախ, դու անուղղելի յես: Վերջը ճարեցիր ելի: Ավելի լավ կլիներ չճարեյիր...

— Հիմարութուններ ես դուրս տալիս... Այս բոլորն ցույց կտամ. բոլորովին նոր են, դեռ վոչ մի անգամ չեն գործածված...

Իսկ յես բոլորովին արթնացել եմ ու լսում եմ. այդ ինչի մասին են խոսում: Չլինի՞ թե ինձ համար նվեր ե բերել:

— Շատ լավ յեղավ, — ասում ե հայրս: — Վաղը կիրակի յե, առավոտյան Պետրոսի մոտ կշարենք: Մի հազար հատ կտպենք, իսկ հետո ընկերները գործարաններում կբաժանեն: Բայց շատ լավ ե կազմած պրոկլամացիան, դրա համար պետք ե Պետրոսին վերցնել:

Մայրիկս խորը հառաչեց:

— Տես վոր թալակի մեջ չընկնեք. սիրտս մի տեսակ անհանգիստ ե: Գոնե ընտանիքդ խղճայիր:

Իսկ հայրիկս ծիծաղում ե.

— Հերիք ե, — ասում ե, — լաց լինես: Ինչ վախկոտն ես: Յեթե բոլորս ել վախենանք, այդպիսով հեղափոխությանը չենք հասնի: Ստրուկ ել կատակենք:

Հետո մոտեցավ սեղանին, վոր դրած եր սենյակի մեջ տեղը.

— Ապա նայիր ե, — ասում ե, — ինչ սիրուններն են:

Մայրիկը մոտեցավ: Յես ել աչքերս բացի, նայում եմ: Հայրիկը կապոցը բացեց, սեղանին թափվեց բոլորովին նոր, փայլուն շրիֆտ:

Իսկ յես շրիֆտ շատ եյի սիրում, վոչ մի խաղալիքի հետ չեյի փոխիլ:

Յերբ հայրիկիս համար տպարանը նախաճաշ եյի տանում, միշտ նայում եյի ինչպես ե նա աշխատում, այնքան հետաքրքիր եր ինձ համար, վոր չեյի կարողանում հեռանալ: Հայրիկը կանգնած եր մի մեծ տափակ արկղի առաջ, իսկ այդ արկղը բաժանված եր մի շարք փոքրիկ արկղիկների: Յեվ ամեն մի արկղիկի մեջ լցրած են քառանկյունի, յերկարաձև արճիճե շատ-շատ կտորներ, — լիտերներ են կոչվում դրանք: Միանգամից յերբ նայում ես, կարծես թե բոլորը միատեսակ են, իսկ յերբ սկսում ես մոտիկից տնտղել, — ամեն մեկի վրա տարբեր տառեր են: Ինչքան հետաքրքիր ե. տառերը դուրս ցցված են և թարս: Մի արկղիկի մեջ բոլորը «ա» յեն, մյուսում՝ «բ», — և այդպես ամբողջ այբուբենը: Հայրիկը կանգնած՝ նրանցից խոսքեր ե կազմում, — արագ-արագ, այնքան արագ, վոր չես կարող հետևել: Այ հենց այդ տառերը, բոլորը միասին, կոչվում են շրիֆտ:

Հա, հետո տեսնում եմ, հայրիկս շրիֆտը թափեց սեղանին: Տառերը փայլում են, խշխշում, բոլորովին նոր, կասես խաղալիք լինեն: Իսկույն

հասկացա բանը ինչու՞ն է. իզուր չեյի գրաշարի աղջիկ, գործադուլների ու բանտարկությունների մասին շատ եյի լսել:

Ուզում եյի նոր շրիֆտը մտտիկից տեսնել, բայց բուն տարավ, և չեմ հիշում թե ինչպես քնեցի:

Հանկարծ քնիս մեջ գգում եմ թե ինչպես մեկը բարձս շարժում է. աչքերս բացում եմ՝ մայրս է. անկողնիս վրա կուացած, գունատ դեմքով, աչքերը չուած, ինչ վոր բան է բարձիս տակը խրում: Իսկ մյուս սենյակում—լսում եմ քայլեր ու տղամարդկանց ձայներ:

— Մայրիկ, — կամաց հարցնում եմ, — այդ ովքեր են:

— Խուզարկում են, բալիկս: Դու քնի: Մի-գուցե քեզ ձեռք չտան:

Մայրիկս հազիվ անկողնուցս հեռացավ, յերբ յերկուսը ներս մտան: Մայրս նրանց ասում է.

— Խնդրում եմ, այստեղ մի քիչ կամաց: Յերեխեն հիվանդ է:

Իսկ նրանցից մեկը կոպիտ ձայնով պատասխանում է.

— Լավ: Հենց ձեր յերեխաները միշտ հիվանդանում են: Ուր վոր խուզարկելու յես գնում— բոլորի յերեխաներն էլ հիվանդ են:

Յես էլ պառկել եմ, բայց վոչ կենդան եմ, վոչ մեռած, աչքերս փակել եմ, իբր թե քնած

եմ: Լսում եմ հարևան սենյակից մեկը կանչում է.

— Առաջ այստեղ նայենք: Այդ սենյակից բոլորին այստեղ ուղարկեք:

— Իսկ այստեղ յերեխան քնած է:

— Թող քնի: Իսկ տանտիրուհուն այստեղ ուղարկեք:

Հետո լսում եմ, բոլորը դուրս յեկան, դուռն էլ փակեցին:

Աչքերս բացի: Ամբողջ մարմնով դողում եմ: Սեղանի վրա լամպը վառած է, ընթրիքից հետո սեղանը դեռ չի հավաքված, անկողիները դեռ չեն տրորված: Յերևում է, վոր դեռ չեյին պառկել քնելու... Իսկ դռան յետևից քայլերի ձայներ են լսվում:

Հանկարծ հիշեցի. իսկ վերտեղ է շրիֆտը:

Շունչս կտրվում է. Լավ գիտեյի, վոր յեթե շրիֆտը գտնեն, հայրիկին կբանտարկեն...

Նստեցի մահճակալի վրա: Նայում եմ չորս կողմը: Չի յերևում, Հա-ա! Մայրիկը ինչ մի բան էր խրում բարձիս տակը: Չեռքս տարա բարձիս տակը և ինչ տեսնեմ... այնտեղ է... Շորի մեջ ամուր կապած, ծակծկում է...

Յերբ այստեղ սկսեն փնտրել— իմ անկողինս էլ կնայեն: Կգտնեն, պետք է թագցնել... Շուտով: Բայց վերտեղ...

Դողում եմ, ատամներս չխկչխկում են, նայում եմ թե ուր թագցնեմ, հարմար տեղ չեմ

գտնում: Յես լսել էյի, վոր յերբ խուզարկու-
թյունն ե լինում, ամեն տեղ և ամեն ինչ նայում
են, տակնուվրա անում...

Վառարանումը դնեմ — կգտնեն: Պահարանի
վերեվը դնեմ: Բայց բավական ծանր ե, ու ժս չի
պատի, կարող եմ ձեռքիցս գցել: Կլավի...

Նստել եմ, կապոցը ձեռքիս, չեմ իմանում ինչ
անեմ... Իսկ պետք ե մի բան անել: Գիտեմ —
պետք ե անեմ:

Բայց ուր... ուր:

Հանկարծ գլխի ընկա: Վեր թռա տեղիցս, վոտ-
քերիս ծայրերին վազեցի սեղանի մոտ: Սեղանին
դրած եր կաթի մեծ կճուճ, մեջն ել բավական
կաթ կա: Տարա կճուճը դրի պատուհանին:
Սկսեցի կապոցը բաց անել: Ձեռքերս դողդողում
են, ուժ չունեմ: Շատ ամուր ե կապած... Ան-
համբեր սպասում եմ — հրես վորտեղ վոր ե ներս
կմտնեն: Չեմ կարողանում կապը արձակել: Փոր-
ձեցի ատամներովս, քաշեցի — բացվեց: Շորի մեկ
ծայրը կճուճի ներսը իջեցրի: Շրիֆտը խշշալով
թափվեց կճուճի մեջ: Շունչս կտրվում ե, կար-
ծում եմ թե լսեցին...

Վոչինչ, — այնտեղ քայլում են, գուցե չլավի:

Կաթը սկսեց բարձրանալ, շորը թրջվեց: Հետո
շորը փռեցի պատուհանին և սկսեցի ձեռքերով
լցնել, շտապում եմ: Կաթը բարձրացավ մինչև

յեզրը, իսկ շրիֆտ դեռ շատ կա: Ի՞նչ անեմ:
Կեսը լցնեմ ուրիշ տեղ: Ձեռքերս դողդողում են,
կթափեմ... Կուցա ու սկսեցի խմել: Խմում եմ,
խմում եմ, շտապում եմ, կոկորդիս կանգնել ե,
քիչ եր մնում խեղդվեցի: Հանկարծ վոտքերի ձայն
եմ լսում դռան մոտ... Աչքերս մթնեցին... Չե,
հեռացան:

Յեվս յերկու բուռը շրիֆտ թափեցի կճուճը,
ելի կաթը մինչև յեզրը բարձրացավ: Նորեն սկսեցի
խմել...

Ուխ! բոլորը տեղավորվեցին, մինչև վերջին
տառը! Կաթը նորեն բարձրացավ յեզրին հավա-
սարվեց: Մի յերկու կում ել խմեցի, շորը գցեցի
զամբուղը, վորտեղ մայրիկը կտորտանքներ եր
պահում, ինքս թռա անկողին մտա: Գլուխս
պտտվում ե, կարծես թե ինչ մի տեղ եմ թռչում
սենյակի հետ միասին, վատ եմ զգում...

Ձգիտեմ, ինչքան այդ դրության մեջ պառկեցի:
Լսում եմ՝ դուռը բացվեց և բոլորը ներս յեկան:
Մայրիկս դողդոջուն ձայնով ասում ե.

— Միայն յերեխին ձեռք չտաք, շատ հիվանդ
ե աղջիկս:

Իսկ նրանցից մեկը պատասխանում ե.

— Աղջիկը մեղ պետք չե: Իսկ անկողինը պիտի
նայենք: Ապա վերցրեք աղջկանը:

— Չի կարելի նրան անհանգստացնել, — ասում
ե մայրս:

Լսում եմ, մայրս հազիվ ե խոսում: Այնպես մեղքս յեկավ: Չեմ ել կարողանում ասեմ, վոր շրիֆսը բարձիս տակը չե:

Պրիստավը գոռաց.

— Վերցրեք աղջկանը: Նազ անելու ժամանակ չկա:

Հայրիկս մոտեցավ, վերցրեց ինձ ու նստեց աթոռին: Իսկ յես ձեացնում եմ իբր թե չեմ ել զգում: Սիրտս ուզում ե թե դուրս թուչի:

Հայրիկի ձեռքերը դողդողում են:

Լսում եմ — բարձը դեն շարտեցին, անկողինս քարուքանդ են անում: Յերկար փնտրեցին:

— Հերիք ե, — ասում են: — կարող եք պառկեցնել:

Հայրիկս ինձ զգուշությամբ պառկեցրեց: Աննկատելի շուռ յեկա, յերեսս դարձրի դեպի սենյակը, — հետաքրքիր ե նայել: Աչքերս կիսաբաց արի ու թերթերունքներիս արանքից նայում եմ...

Նայեմ տեսնեմ. հարևան տների յերկու բազապանները, հաստ պրիստավը, կարմիր դեմքով ու յերկար բեղերով: Ամենից շատ միտս են մնացել նրա ձեռքերը, մատները կարճ, ուռած, ինչպես կոճղի կտորներ: Յեվ ամեն ինչ այդ մատներով նա շոշափում եր, ման եր գալիս սենյակում ու շարունակում շոշափել, իսկ պրիստավի ոգնակաճն ու գործողովոյը իրերը տակնու-

վրա եյին անում: Դրանց հետ մեկն ել կար, սովորական քաղաքացու հագուստով, յերկի լրտես եր: Դրան մինչև հիմա ել չեմ կարողանում մոռանալ: Ամբողջ ժամանակը ժպտում եր, ձայնը քաղցր-մեղցր, իբրև թե շատ սիրալիր ե, իսկ աչքերը — աղվեսի աչքերի պես — շարունակ դես ու դեն եր պտտեցնում և կասես ծակում եյին այդ աչքերը: Բայց ինչպես եր վոր նա չնկատեց, վոր յես թերթերունքներիս արանքից շարունակ իրեն ում հետևում:

Ամեն տեղ ման յեկան, ամեն տեղ փնտրեցին: Հայրիկս արձանի պես մնացել եր կանգնած, իսկ մայրիկս քաշվել եր մի անկյուն ու յերեսը ձեռքերով ծածկել:

Պրիստավը կատաղել եր, յերկի գոհ չեր վոր վոչինչ չգտավ:

— Դե, — ասում ե, — արձանագրություն պիտի գրեմ: Ապա սեղանը մաքրեցեք:

Սիրտս ասում ե՝ մի բան կլինի: Մայրս վերկացավ, սեղանի յերեսը մաքրեց: Պրիստավը սկսեց գրել:

Հետո չեմ հիշում, քնել եյի, թե թմրածընկած եյի:

Հանկարծ արթնացա, կասես թե մեկը ինձ բռնեց: Աչքերս բացեցի, տեսնեմ — դուրսն արդեն լույս ե: Մայրիկը սեղանի մոտ նստած

կարում է: Իսկ սենյակի միջ տեղը կանգնած է հայրիկը: Հիշեցի բոլորը, քիչ էր մնում ճչալի ուրախությունից:

Հայրիկիս ուրեմն չեն տարել: Նա տանն է: Մայրս խոսում է, իսկ ձայնը այնքան բարկացկոտ:

— Ի՞նչ ես խոսում, յես խոմ գժվել չեմ: Ի՞նչ պես թե չեմ հիշում: Ասում եմ ինքս եմ Քնարիկի բարձի տակը դրել: Սպասի, դու մի քալազի կգաս քո բունտով շիկների հետ:

— Զարմանալի բան է, — ասում է, — կասես ջուրը ընկավ:

Յես էլ չկարողացա դիմանալ: Այնպես ծիծաղեցի ու ճչացի:

— Հայրիկ, վոչ թե ջուրն է ընկել, այլ կաթի մեջն է ընկել:

Յերկուսն էլ ցնցվեցին: Նայեց հայրիկը ինձ վրա:

— Ի՞նչ է ասում, գառանցում է:

Իսկ յես վերմակը դեն շալրտեցի, նստեցի տեղս, ուրախությունից խոսել չեմ կարողանում: Յեվ հանկարծ հիշեցի:

— Լսիր, հայրիկ, — ասում եմ ու ինքս ծիծաղում, — յես մի հեքիաթ եմ կարդացել. ապրում էյին մի մարդ ու կին. նրանք մի կախարդական

կճուճ ունեյին: Նրանք քանի կաթը խմում էյին, կճուճը նորեն լցվում էր... այդպես էլ մերը:



Հայրիկը գլխի ընկավ, նայեց չորս կողմը, վագեց պատուհանի մոտ, կճուճը բարձրացրեց...

— Բնարիկ, — ասում ե, — այս դու յես այս-
տեղ լցրել:

Յես միայն գլխով արի:

Մայրիկս ձեռքերը իրար խփեց և ուրախու-
թյունից սկսեց լաց լինել:

— Աղջիկս, իմ խելքս, ազատեցիր դու մեզ
բանտից ու տանջանքից...

Իսկ հայրիկը մոտեցավ, լուռ վերցրեց ինձ
ձեռքերի վրա, բարձրացրեց, սեղմեց կրծքին ու
ման տվեց սենյակում: Նա լուռ ե, վռչինչ չի
ասում, միայն ավելի ու ավելի ուժեղ ե սեխ-
մում ինձ կրծքին:

Ման տվեց ինձ հայրիկը, ման տվեց, հետո
կամաց ասում ե.

— Այ թե աղջիկ ունեմ: Բեզնից իսկական
հեղափոխական դուրս կգա: Չշփոթվեցիր:

Իսկ յես պատասխանում եմ.

— Ի՞նչպես թե՛ «դուրս կգա»: Մի՞թե յես
արգեն հեղափոխական չեմ:

Հայրիկս ծիծաղեց:

— Ճիշտ ե, — ասաց — քո արած գործն ել՝
ինչպես մի կաթիլը ծովում — կա ընդհանուր
գործի մեջ:

Բայց վոր փորս իրատ ցավեց... Ինքս հիվանդ՝
ու միանգամից այդքան կաթ խմեցի, ի հարկե
վատ կզգայի:

Իսկ հայրիկը կատակով ասում ե.

— Այդ դու ազատութեան համար ես տանջ
վում, հեղափոխութեան համար:


Յես ել ցավիցը քիչ ե մնում լաց լինեմ, —
ասում եմ.

— Իհարկե, հեղափոխութեան համար!

Մի բան միայն ինձ ցավ եր գալիս, վոր դպրո-
ցում չեյի կարող ընկերուհիներիս պատմել:
Կոնսպիրացիա յես:



Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page.



Faint, illegible text at the top of the right page.

Main body of faint, illegible text on the right page, appearing as bleed-through.

1680

5 407.

23489

Цена 5 коп.
X. 2.



Е. ВЕРЕЙСКАЯ
Таня
революционерка
На армянском языке

0006269

2013

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР.
Москва, центр, Никольская, 10.

ՀՀ Ազգային գրադարան



NL0006269

